Հավելված N 82
Էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ. հուլիսի 26-ի N 636-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական ծրագրերի նախագծման վարչության (այսուհետ՝ Վարչություն) գյուղատնտեսության աջակցության ծրագրերի նախագծման բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 23-32.4-Մ2-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը կամ Բաժնի ավագ մասնագետը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2.Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. իրականացնում է գյուղատնտեսության ոլորտի ռազմավարական ծրագրերի, ծրագրային միջոցառումների, հայեցակարգերի, պետական աջակցության ծրագրերի, իրավական ակտերի մշակման աշխատանքները,
2. իրականացնում է գյուղատնտեսության զարգացման գերակա ուղղությունների, մշակվող ծրագրերի ֆինանսավորման ծավալների կանխորոշում,
3. գյուղատնտեսության փաստացի վիճակի պարբերական վերլուծության և զարգացման միտումների ուսումնասիրությունների արդյունքում՝ իրականացնում է ոլորտի գործունեության բարելավմանն ու արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունների և միջոցառումների մշակումը,
4. իրականացնում է ագրարային ոլորտում տնտեսավարման ձևերի, մասնավորապես գյուղատնտեսական կոոպերացիայի խթանման քաղաքականության մշակումը,
5. իրականացնում է գյուղատնտեսությունում տնտեսավարման ձևերի զարգացման, մասնավորապես գյուղատնտեսական կոոպերացիային աջակցության պետական ծրագրերի մշակումը, առաջարկություններ է ներկայացնում տվյալ բնագավառը կարգավորող օրենսդրական դաշտի բարելավման ուղղությամբ,
6. իրականացնում է գյուղատնտեսական ռիսկերի կառավարման քաղաքականության մշակումը,
7. իրականացնում է Եվրասիական տնտեսական միության և ԱՊՀ անդամակցությամբ պայմանավորված գյուղատնտեսության պետական աջակցության, անդամ պետությունների ագրոպարենային համակարգի գործունեության հետ առնչվող աշխատանքային խմբերի աշխատանքներին մասնակցություն և ներկայացնում է առաջար-

կություններ,
8. իրականացնում է գենդերային և այլ ծրագրային փաստաթղթերի վերաբերյալ գյուղատնտեսության ոլորտին առնչվող առաջարկությունների և հաշվետվությունների նախապատրաստման աշխատանքները:

Իրավունքները՝

• ստանալ գյուղատնտեսության ոլորտի ռազմավարական ծրագրերի, ծրագրային միջոցառումների, հայեցակարգերի, պետական աջակցության ծրագրերի, իրավական ակտերի մշակման համար, ինչպես նաև այլ ծրագրային փաստաթղթերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն և տալ առաջարկություններ,
• ստանալ ելակետային տվյալներ մշակվող ծրագրերի ֆինանսավորման ծավալների կանխորոշման համար,
• ստանալ գյուղատնտեսության փաստացի վիճակի վերաբերյալ պարբերական տեղեկատվություն և ոլորտի գործունեության բարելավմանն ու արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ,
• ներկայացնել առաջարկություններ գյուղատնտեսությունում տնտեսավարման ձևերի զարգացման, մասնավորապես գյուղատնտեսական կոոպերացիային աջակցության բնագավառը կարգավորող օրենսդրական դաշտի բարելավման ուղղությամբ,
• ստանալ և ներկայացնել գյուղատնտեսական ռիսկերի կառավարման վերաբերյալ առաջարկություններ,
• մասնակցել Եվրասիական տնտեսական միության և ԱՊՀ անդամակցությամբ պայմանավորված գյուղատնտեսության պետական աջակցության, անդամ պետությունների ագրոպարենային համակարգի գործունեության հետ առնչվող աշխատանքային խմբերի աշխատանքներին,
• ստանալ գենդերային և այլ ծրագրային փաստաթղթերի վերաբերյալ գյուղատնտեսության ոլորտին առնչվող առաջարկություններ
• իրականացնել ոլորտի զարգացմանն ուղղված տարատեսակ հանդիպումներ, քննարկումներ, խորհրդակցություններ:

Պարտականությունները՝

• մշակել գյուղատնտեսության ոլորտի ռազմավարական ծրագրեր, ծրագրային միջոցառումներ, հայեցակարգեր, պետական աջակցության ծրագրեր, իրավական ակտեր,
• կանխորոշել գյուղատնտեսության զարգացման գերակա ուղղությունները, մշակվող ծրագրերի ֆինանսավորման ծավալները,
• մշակել ագրարային ոլորտում տնտեսավարման ձևերի, մասնավորապես գյուղատնտեսական կոոպերացիայի խթանման քաղաքականություն,
• իրականացնել կոոպերատիվների զարգացման միջազգային փորձի և դրանց կիրառման հնարավորությունների ուսումնասիրում
• մշակել ռիսկերի կառավարման քաղաքականություն,
• ներկայացնել Եվրասիական տնտեսական միության և ԱՊՀ անդամակցությամբ պայմանավորված գյուղատնտեսության պետական աջակցության, անդամ պետությունների ագրոպարենային համակարգի գործունեության հետ առնչվող առաջարկություններ,
• նախապատրաստել գենդերային և այլ ծրագրային փաստաթղթերի վերաբերյալ գյուղատնտեսության ոլորտին առնչվող առաջարկությունները և հաշվետվությունները:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գյուղատնտեսության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. ծրագրերի մշակում
2. խնդրի լուծում
3. հաշվետվությունների մշակում
4. տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում,
2. կոնֆլիկտների կառավարում,
3. հասարակության հետ կապերի ապահովում,
4. բողոքների բավարարում,
5. ժամանակի կառավարում,
6. ելույթների նախապատրաստում և կազմակերպում,
7. ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում,
8. փաստաթղթերի նախապատրաստում.

4. Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեություն որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: